նա դարձեալ անկախ է եւ լաւագոյն դէպքում միայն դաշնակից։

Եւ մեր աշխարհի այս մշտայոյզ, բարձրագլուխ, անհանգիստ ու ըմբոստ վիճակն էր, որ Վերգիլիոս ամփոփեց իր խորհրդանշական եւ նշանաւոր տողերի մէջ՝ «Եւ կամրջընկէց Արաքսը եռում է իր ափերի մէջ»։

Սա մեծագոյն վկայութիւնն է, որ այդքան պատկերաւոր ձեւով հաստատում է հայ ժողովուրդի ազատասէր խառնուածքը եւ մարտական ոգին։

Կամրջընկէց եւ անհանգիստ Արաքսը հանդարտացնելու համար բազմաթիւ ռազմական ձեռնարկներից յետոյ, Հռոմը դիմում էր վերջապէս իր իսկ շահերի տեսակէտից լաւագոյն եղանակին։ Նա ճանաչում էր Հայաստանի բացարձակ անկախութիւնը եւ բարեկամութեան դաշինք էր կռում նրա հետ։ Այսպէս սկսուեց Արշակունի առաջին հայ թագաւորի իշխանութիւնը Հայաստանում, Ներոնի օրօք։

Մեր Տրդատ առաջինի ճամբորդութիւնը այդ առթիւ դէպի Հռոմ ոչ միայն մեր, այլ եւ հռոմէական պատմութեան մէջ խոշոր քաղաքական երեւոյթ էր։ Հայ թագաւորը ճամբորդում էր իբր մեծազօր եւ անկախ միապետ։ Երեք հազարանոց մի ձիաւոր բանակով, շքեղ շքախումբով՝ ուղեկցութեամբ իր թագուհու, որ նստած էր զեղեցիկ երիվարի վրայ, ոսկէ սաղաւարտը գլխին, եւ մազերը հովերին տրուած եւ որ ի դէպ է ասել, հանդիսանում է հին աշխարհի լաւագոյն ամազօնը, որ կտրել ու անցել է միանգամից երեք հազար քիլոմէթր։

Հայ արքայի այս բազմահազար շքախմբով ճամբորդութիւնը, որ կատարւում էր ի հաշիւ Հռոմի, ահագին դումար նստեց կայսրութեանը։ Հռոմի տիրապետութեան սահմաններից սկսեալ սենատի հրամանով Տրդատ առաջինին մեծ ինքնակալի վայել պատիւներ տրուեցին մինչեւ Հռոմ, ուր Ներոն նրան ընդունեց չտեսնուած շուքով։ Կայսրութեան մայրաքաղաքը տակաւին երբեք ականատես չէր եղած այն մեծածախս հանդէսներին, որով Հռոմը փառաւորեց հեռու Արեւելքից եկած հայոց միապետը։ Ի լրումն ամենայնի, Ներոն ինքը իր ձեռքով հայոց Տրդատի գլխին դրեց արքայական ոսկեհուռ թագ։

Անշուշտ խորիմաստ եւ հեռատես Հռոմը բոլոր այս ծախքն ու զոհողութիւնները չէր կատարում սոսկ ամբոխին զուարճացնելու կամ Արեւելքի մի իշխանը պատուելու համար։ Այս միջոցով սենատը ճգնում էր վերջ դնել Հայաստանի եւ Հռոմի կռիւներին եւ տեւական խաղաղութիւն հաստատել մեր սահմաններում։

Մանաւոր մի բախտ էր, որ վիճակուեց Տրդատ առաջինին։ Եղբայր պարթեւական Արշակունի թագաւորին, միաժամանակ պսակադրուած Հռոմում, իր օրօք Հայաստանը հանդիսանում էր մի տեսակ խաղաղութեան հանդրուան Արեւելքի եւ Արեւմուտքի, այսինքն՝ Հռոմի եւ Տիրոնի մէջ։ Մեր աշխարհի այս հանդստութիւնը բնականապէս տեւեց այնքան, որքան նրա հարեւան երկու մեծ պետութիւնների շահերն ու կամքն էին պահանջում։ Հայաստանի բախտն իր ձեռքում չէր, եւ յետագայ մեր Արշակունի թագաւորները հակառակ իրենց բոլոր հեռատեսութեան, բոլոր խոհեմութեան ու աչալրջութեան, միշտ վտանգաւոր երկընտրանքի առջեւ մնացին քաղաքականապէս՝ Հռո՞մ, թէ՞ Պարսկաստան։ Եւ այս դժուար երկընտրանքը դամոկլեան սրի պէս հայոց աշխարհի վրայ կախուեց, այնուհետեւ բոլոր դարերի ընթացքում մինչեւ նորագոյն ժամանակները, մինչեւ մեր օրերը։

Համակ մեր պատմութիւնն է այս, մեր բախտը, մեր թշուառութիւնը եւ մեր ճակատագրի մեծութիւնը։

Ի՞նչ վատ է աւանդուել մեզ մեր պատմութիւնը մեր մանուկ օրերին։ Գէթ այսպէս է կրթուել իմ սերունդը։ Հայ թագաւորների բաւական անգոյն շարան, հայ հայրենիքի միշտ նկուն վիճակ, թշնամու՝ օտարի մեծութիւն եւ զօրութիւն, բռնակալների աւեր, բարբարոսների արշաւանք եւ անծայր խեղճութիւն մեր ազգի, որ մղձաւանջի պէս աշնանային ցուրտ մառախուղով իջել է մեր սարսռացող մանուկ հոգիների վրայ։ Մեր պատմութեան խմաստութիւնը, նրա խոհական եւ հոգեպարար շրջանները, ինչպէս եւ մեր նշանաւոր արքաների ու աննման զօրավարների իսկական կեանքն ու պատկերը գրեթէ միշտ կամ վրիպել են մեր ուսուցիչներից եւ կամ փոքրացել ու աննշան դարձել օտարների համեմատու-